

# ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒՄԵՐՏ ԴՈՒԿԱՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

05.10.2022



## Միրելի՝ ուսուցիչներ

### Մանկավարժական աշխատանքի սիրելի՝ վետերաններ

Հոկտեմբերի 5-ը ձեր մասնագիտական տոնի կապակցությամբ շնորհավորանքներ, երախտագիտության ու գնահատումի խոսքեր ասելու օր է. գիտեմ, որ մեր ժամանակներում նման առիթներն ավանդական տոնական օրերից տարբերվում են... Գիտեմ, որ հասկապես Սյունիքում շատերիդ միտքը և ուշադրությունն առօրյա ուսումնական գործընթացից զատ սևեռված է հայրենիքի անվտանգությանը, նրա պաշտպանությանը, ձեր աշակերտների համար՝ խաղաղություն, դեռ երեկվա սաների համար անփորձանք ծառայություն փափագելով: Ուստի, սա հենց այն օրն է, երբ որ ձեզ, սիրելի՛ մանկավարժներ, պարտավոր ենք ասել՝ շնորհակալություն հայ զինվորի դաստիարակության, նրան կրթելու համար, նրա մեջ հայրենասիրություն, ուժեղ կամք ու ոգի ներշնչելու համար:

Ձեր աշակերտներից շատերը, որ նոր են դպրոցին հրաժեշտ տվել, արդեն իսկ հերոսության օրինակներ են. հաճախ պատմեք նրանց մասին մեծացող սերնդին:

Շնորհակալություն նաև նրա համար, որ կարողանում եք ճիշտ արձագանքել ու հարմարվել անկանխատեսելի դժվարություններին, եթե դա սերունդ կրթելու նպատակի համար է:

Շնորհավորելով բոլորիդ Ուսուցչի տոնի կապակցությամբ՝ ամենից առաջ ցանկանում եմ խաղաղություն, թո՛ղ որ ոչինչ չխաթարի ձեր բնականոն աշխատանքը:

Ինդրում եմ՝ անկախ դասերի կազմակերպման ձևից ու օրվա խնդիրներից, ամենայն պատասխանատվությամբ և նվիրումով

շարունակել ձեր առաքելությունը, որովհետև կիրթ, ուսյալ, գրագետ,  
սթափ մտքով սերունդն է ապահովելու Հայաստան երկրի ուժեղացումը:  
Մանկավարժական իմաստնություն՝ են, մասնագիտական նորան՝ ր  
հաջողություններ, ծրագրածի իրականացո՝ւմ ու  
բարեկեցություն՝ են՝ բոլորիդ: